ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2020 թվականի N 40

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. ապրիլի 17-ի թիվ 470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N 912 –Ն որոշումներով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը բավարարում է <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի բնակիչ Ամայյա Սիմոնի Զաքարյանը դիմել է Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Արցախի

փողոցի թիվ 3 հասցեում գտնվող իրեն պատկանող 0.16 հա օրինական հողամասի և դրան կից ավել օգտագործվող 0.0051 հա ինքնակամ զբաղեցրած հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու, ինչպես նաև 2014թ. ինքնակամ կառուցված 72 ք/մ բնակելի տան օրինականացման խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Արցախի փողոցի թիվ 3 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Ամալյա Սիմոնի Զաքարյանի /ծնված 28.05.1953թ./,Ստելլա Սարգիսի Զաքարյանի /ծնված 28.01.1987թ./, Յաղութ Կարապետի Զաքարյանի /մահացել է 27.02.2004թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0.16 հա հողամասի և դրան կից ավել օգտագործվող 0.0051 հա ինքնակամ զբաղեցրած հողամասի վրա մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տան նկատմամբ /39.1 ք/մ բնակելի տուն՝ կառուցված 1948թ., 47.3 ք/մ բնակելի տուն՝ կառուցած 1987թ., 33.2 ք/մ բնակելի տուն՝ կառուցված 1992թ., 53.3 ք/մ բնակելի տուն՝ կառուցած 1987թ., 29.7 ք/մ պարիսպ՝ կառուցված 1990թ./:

2.Օրինական ճանաչել քաղաքացիներ Ամալյա Սիմոնի Զաքարյանին /ծնված 28.05.1953թ./,Ստելլա Սարգիսի Զաքարյանին /ծնված 28.01.1987թ./, Յաղութ Կարապետի Զաքարյանին /մահացել է 27.02.2004թ./ վերոնշյալ 0.16 հա հողամասի և դրան կից ավել օգտագործվող 0.0051 հա ինքնակամ զբաղեցրած հողամասի վրա 2014թ. կառուցված 72 ք/մ բնակելի տունը:

3.Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը կազմում է 151200 / մեկ հարյուր հիսուն մեկ հազար երկու հարյուր/ դրամ:

4.Սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից:

6.Բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, Մուսալեռ համայնք, Արցախի փողոց, թիվ 3:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

2020 թվական,սեպտեմբերի 8 ,գ. Մուսալեռ